ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020թվականի N 26

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն

1.1 Արենի համայնքի Արենի բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 40 հա (ծածկագիրը՝ 10-008-0268-0062, գործառնական նշանակությունը վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 10 տարի ժամկետով վարձակալությամբ հատկացնելուն: մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս 200 000 ՀՀ դրամ:

1.2 Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1.01728 հա (ծածկագիրը՝ 10-006-0332-0034, գործառնական նշանակությունը վարելահող) գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով, 25 տարի ժամկետով վարձակալությամբ հատկացնելուն: մեկնարկային գինը սահմանել հողի հարկի տարեկան դրույքաչափից ոչ պակաս 12 000 ՀՀ դրամ:

2. Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին սույն որոշման 1.1-ի հողամասի մրցույթում հաղթող ճանաչված անձի կամ կազմակերպության հետ հողամասի վարձակալության պայմանագիր կնքելուց ներառել կետ, որով հաղթող ճանաչված անձը կամ կազմակերպությունը պարտավորվում է պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած, առաջիկա երեք տարիների ընթացքում կատարել խոշորածավալ ներդրումներ (դեպի հանդամաս տանող ճանապարհի բարեկարգում, ոռոգման ջրագծի կառուցում) և հիմնի բազմամյա տնկարկ: Ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում համայնքապետարանի կողմից միակողմանի կլուծվի վարձակալության պայմանագիրը՝ այդ մասին նախօրոք ծանուցելով վարձակալին: